Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ՄԻՋԵՎ

ԵՐԵՎԱՆ 2009 թ. Օգոստոսի 27.

քաղաք Երևան [illegible] երկու հազար ինը թվական

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» Համատեղ Ձեռնարկություն Փակ Բաժնետիրական Ընկերություն (իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան Գրիգոր Լուսավորչի 13, 1 (հետագայում՝ **«Վարձատու»**), ի դեմս գլխավոր տնօրեն Խաչիկ Զաքարյանի, որը գործում է համաձայն ընկերությ կանոնադրության, ում անունից հանդես է գալիս **լիազոր ներկայացուցիչ Նշան Ոսկանյանը** (անձնագիր՝ AA 0237 տրված հազար ինը հարյուր իննսունհինգ թվականի հուլիսի տասներեքին, 009-ի կողմից, հաշվառված՝ ք. Երև Դեմիրճյան փակուղի, տուն 21), համաձայն երկու հազար ինը թվականի օգոստոսի քսանհինգին տրված թիվ 02 լիազորագրի, մի կողմից, և

«Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան 19) (հետագայում՝ **«Վարձակալ»**), ի դեմս աշխատակազ ղեկավար Հարություն Յավրյանի (անձնագիր AG 0373609, տրված երկու հազար չորս թվականի սեպտեմ երեսունին, 004-ի կողմից, հաշվառված՝ Վաղարշյան 15բ շենք, բնակարան 27), որը գործում է համաձայն ընկերությ կանոնադրության, մյուս կողմից, (ստորև՝ **«Կողմեր»**) կնքեցին սույն պայմանագիրը (հետագայում՝ **Պայմանա** հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. **Պայմանագրի** ուժով **Վարձատուն** վճարի դիմաց **Վարձակալի** ժամանակավոր օգտագործմանն է հանձ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վարդանանց փակուղի թիվ 8 շենքի N3 տարածք հասցեում գտնվ **Վարձատուին** սեփականության իրավունքով պատկանող տարածքի երրորդ հարկի թիվ 302, 303, 304, 305, 306, 307, 313, 314, 315, 316 և 317 սենյակները՝ 367,8 քմ (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ ութ տասնորդական քառակ[illegible] մ ընդհանուր մակերեսով (սեփականության վկայական 2040971 տրված ինը օգոստոսի երկու հազար վեց [illegible] (հետագայում՝ **Տարածք**): Տարածքի նկատմամբ օգտագործման իրավունքի հետ միաժամանակ **Վարձակալ** փոխանցվում Շենքի զբաղեցրած հողամասի համապատասխան մասի նկատմամբ իրավունքը՝ համաձայն ՀՀ [illegible] ի 656 հողվածի:

1.2. **Վարձակալը Տարածքը** վարձակալության է ընդունում իր կանոնադրական նպատակների իրականացման հա որը ծառայելու է որպես գրասենյակ:

1.3. **Վարձատուն** երաշխավորում է, որ **Տարածքը** արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, գրավի տակ չէ, վերաբերյալ առկա է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտ տարածքային ստորաբաժանման երկու հազար ինը թվականի օգոստոսի տասնչորսին տրված թիվ 0176310 միասնս տեղեկանքը:

1.4. **Տարածքը** համարվում է **Վարձատուի** կողմից հանձնված, իսկ **Վարձակալի** կողմից ընդունված **Կողմերի** կ համապատասխան փոխանցման ակտի ստորագրման պահից, **որը Կողմերը** պարտավորվում են ստորագրել մինչև **հազար ինը թվականի սեպտեմբերի մեկը ներառյալ:**

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Վարձատուն** իրավունք ունի՝

2.1.1 Վերահսկել **Տարածքի** օգտագործման ուղղությունները՝ համաձայն **Պայմանագրի** 1.2. կետի:

2.1.2 **Պայմանագրի** 1.2. կետի պահանջը **Վարձակալի** կողմից խախտվելու դեպքում առանց նախաս միակողմանիորեն վաղաժամկետ լուծել **Պայմանագիրը**, պահանջելով հետ վերադարձնել **Տարածքը**:

2.1.3 **Պայմանագիրը** դադարելու կամ վաղաժամկետ լուծվելու դեպքում պահանջել **Վարձակալից** վե [illegible] **Տարածքը**, որը ձևակերպվում է վերադարձման ակտով:

2.2. **Վարձատուն** պարտավոր է՝

2.2.1. Օժանդակել **Վարձակալին Պայմանագրից** բխող նրա իրավունքների իրագործմանը:

2.2.2. **Վարձակալին Տարածքը** տրամադրել **Պայմանագրի 1.4 կետով սահմանված կարգով:**

2.3. **Վարձակալը** իրավունք ունի՝

2.3.1. Ինքնուրույն որոշել **Տարածքում** իր գործունեության ուղղությունները, պահպանելով **Պայմանագրի** 1.2. պահանջը:

2.3.2. **Վարձատուին** սեփականության իրավունքով պատկանող տարածքով ազատ մուտք գործել վարձակ **Տարածք**:

2.4. **Վարձակալը** պարտավոր է՝

2.4.1. **Տարածքը** օգտագործել միայն **Պայմանագրի** 1.2. կետում նշված նպատակների համար:

2.4.2. **Տարածքի** օգտագործման համար **Վարձատուին** վճարել Պայմանագրի 3 գլխով սահմանված կա ժամկետներում և չափերով:

2.4.3. **Պայմանագիրը** դադարելու կամ վաղաժամկետ լուծվելու դեպքում վերադարձնել **Տարածքը** նույն վիճակու ընդունել է՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը:

2.4.4. Իրականացնել **Տարածքի** ներքին պահպանությունը հակահրդեհային և սանիտարահիգիենիկ նոր համապատասխան:

2.4.5. Առանց **Վարձատուի** գրավոր համաձայնության չկատարել **Տարածքի** հիմնական վերանորոգում:

2.4.6. **Պայմանագրով** ձեռք բերած իր իրավունքները և ստանձնած պարտականությունները առանց **Վարձատուի** գրավոր համաձայնության չփոխանցել այլ անձի /անձանց/, վարձակալության իրավունքը գրավ չդնել կամ որպես ավանդ չներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական կապիտալում:
2.4.7. Իր մեղքով հակահրդեհային ու սանիտարահիգիենիկ կանոնների եւ ընդունված նորմերի կոպիտ խախտման հետևանքով տեղի ունեցած վթարի պատճառով **Տարածքի** վնասվածքի կամ կորստի դեպքում լրիվ չափով հատուցել **Վարձատուին** պատճառված վնասները:
2.4.8. Վարձակալության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ վկայականը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում **Վարձատուին** հանձնել վկայականի պատճենը:
2.4.9. Իր դեմ սնանկության վարույթ հարուցվելու, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում անհապաղ տեղեկացնել **Վարձատուին**:
2.4.10. **Պայմանագրի** 2.4.9. կետում նշված հիմքերով **Պայմանագրի** վաղաժամկետ լուծման կամ վերաձևակերպման դեպքում կատարել դրա հետ կապված բոլոր ծախսերը:
2.5. **Վարձակալի** կողմից **Պայմանագրի** գործողության ընթացքում կատարված **Տարածքի** անբաժանելի բարելավումները **Վարձատուի** կողմից չեն հատուցվում՝ անկախ դրանք իրականացնելու վերաբերյալ Վարձատուի համաձայնության առկայությունից կամ բացակայությունից:
2.6. **Վարձակալը** հայտարարում է, որ Պայմանագրի կնքման պահին իր կողմից Տարածքը զննվել է, հայտնաբերվել են Տարածքի թերությունները, տեղեկացված է **Տարածքի** փաստացի վիճակի և թերությունների մասին, համաձայն է **Տարածքը** վարձակալության ընդունել այն վիճակում, ինչ վիճակում, որ **Պայմանագրի** կնքման պահին այն գտնվում է, և հավաստիացնում է, որ **Պայմանագրի** կնքման պահից որևէ պահանջ չի ներկայացնի **Վարձատուին Տարածքի** վիճակի վերաբերյալ:
2.7. **Պայմանագրի** գործողության ընթացքում **Վարձատուն Տարածքի** հիմնական վերանորոգման պարտավորություն չի ստանձնում:

3. Փոխհաշվարկների կարգը և վարձավճարը

3.1. **Վարձակալը Տարածքի** օգտագործման համար որպես վարձավճար **Վարձատուին** վճարում է ամսական **1 839 000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար)** ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է ավելացված արժեքի հարկը:
3.2. Սույն պայմանագրի կնքման պահին Վարձակալը Վարձատուին վճարում է **3 678 000 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար) դրամի չափով գումար**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը, որից **1 839 000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումարը** կհանդիսանա Տարածքի օգտագործման համար առաջին ամսվա վարձավճարի գումարը, մյուս **1 839 000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումարը** կհանդիսանա Պայմանագրի գործողության տասներկուերորդ ամսվա վարձավճարի գումարը:
3.3. Պայմանագրի գործողությունը 4.1. կետի համաձայն շարունակվելու դեպքում Վարձակալը պարտավորվում է. Պայմանագրի հաջորդ տարվա համար՝ որպես հաջորդ տարվա առաջին և տասներկուերորդ ամիսների վարձավճար վճարել **3 678 000 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ գումար**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը: Կանխավճարի նշված գումարը Վարձակալը վճարում է Պայմանագրի գործողության հերթական տարին սկսելուց երկու ամիս առաջ: Վճարման նշված կարգը գործում է յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, երբ Կողմերը կհամաձայնվեն շարունակել Պայմանագրի գործողությունը, իսկ Պայմանագիրը Վարձակալի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում տվյալ տարվա տասներկուերորդ ամսվա համար վճարված գումարը Վարձակալին չի վերադարձվում:
3.4. Պայմանագրի Տարածքի օգտագործման մյուս ամիսների վարձավճարի գումարները Վարձակալը վճարում է. յուրաքանչյուր ամսվա համար **մինչև տվյալ ամսվա տասը ներառյալ:**
3.5. **Վարձատուի** պահանջի դեպքում **Վարձակալը** պարտավոր է, վարձավճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով, իսկ մինչև տվյալ ամսվա 15 (տասնհինգը) վարձավճարը և հաշվարկված տույժերը չվճարվելու դեպքում **Վարձատուին** իրավունք է վերապահվում միակողմանիորեն լուծելու **Պայմանագիրը**, որի դեպքում **Վարձակալը** հատուցում է **Վարձատուին** պատճառված վնասները:
3.6. **Տարածքի** հեռահաղորդակցության և էներգամատակարարման համար **Վարձատուի** կատարած և /կամ/ կատարելիք ծախսերը ամբողջությամբ ենթակա են հատուցման **Վարձակալի** կողմից՝ վերջինիս **Վարձատուի** կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացված համապատասխան փաստաթղթի /փաստաթղթերի/ հիման վրա: Սույն կետում նշված փաստաթղթերի ներկայացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում **Վարձակալը** պարտավոր է ամբողջությամբ հատուցել **Վարձատուի** կատարած և /կամ/ կատարելիք ծախսերը: Սույն կետում նշված ծախսերի հատուցման կարգը չի գործում այն դեպքում, երբ **Վարձակալը** հանդիսանում է էլեկտրաէներգիա ձեռքբերող և հեռահաղորդակցության ծառայություն ստացող առանձին բաժանորդ:
3.7. **Վարձատուն** իր հաշվին **Տարածքում** տեղադրում է էլեկտրական հաշվիչ:

4. Պայմանագրի գործողության ժամկետը, դրա փոփոխումը, երկարաձգումը և լուծումը

4.1. **Պայմանագիրը** ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է **1/մեկ/ տարի** ժամկետով՝ հաշված Տարածքի փաստացի օգտագործման օրվանից: Եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո **Վարձակալը, Վարձատուի** առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել **Տարածքից, Պայմանագիրը** ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով, ևս մեկ տարի ժամկետով:

4.2. **Պայմանագրում** փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև **Պայմանագրի** լուծումը, բացառությամբ **Պայմանագրի** 2.1.2, 3.3. և 4.3. կետերով նախատեսված դեպքերի, կատարվում են **Կողմերի** փոխհամաձայնությամբ, որի վերաբերյալ կազմված փաստաթուղթը կհանդիսանա **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4.3. **Կողմերից** յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է լուծել **Պայմանագիրը**՝ այդ մասին մյուս կողմին 15 (տասնհինգ) օր առաջ տեղյակ պահելով: Ընդ որում սույն կետում նշված ժամկետը լրանալուց հետո Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված, որից հետո **Վարձակալը** պարտավոր է անհապաղ ազատել **Տարածքը**:
4.4. **Պայմանագրով** նախատեսված կարգով այն վաղաժամկետ լուծվելու դեպքում **Կողմերը** չեն ազատվում **Պայմանագրով** մինչ այդ ստանձնած պարտավորություններից:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. **Պայմանագրի** չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև միմյանց հասցված վնասների համար **Կողմերը** պատասխանատու են իրենց ողջ գույքով եւ միջոցներով:
5.2. **Պայմանագրով** չկարգավորված հարցերը և **Կողմերի** միջեւ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ 5 (հինգ) օրվա ընթացքում փոխհամաձայնության չգալու դեպքում՝ **Պայմանագրով** և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.3. **Պայմանագիրը** ենթակա է նոտարական վավերացման, իսկ **Պայմանագիրց** ծագող իրավունքը՝ երեսունօրյա ժամկետում ենթակա է պետական գրանցման՝ համաձայն ՀՀ քաղ. օր-ի 610 հոդված 2-րդ կետի, 611 հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի:
5.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածի համաձայն Պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման:
5.5. **Պայմանագրի 5.3. կետով** սահմանված Պայմանագրի կնքման հետ կապված նոտարական ծախսերը կատարվում են **Վարձատուի** կողմից, իսկ **պետական գրանցման ծախսերը** կատարվում են **Վարձակալի** կողմից: **Պայմանագրի 5.4. կետով սահմանված** Պայմանագրի լուծման նախաձեռնություն ցուցաբերող կողմը կրում է դրա հետ կապված նոտարական ծախսերի վճարման պարտականությունը:
5.6. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 /չորս/ իրավահավասար օրինակներից:

6. Կողմերի վավերապայմանները

Վ ա ր ձ ա տ ու՝	Վ ա ր ձ ա կ ա լ՝
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՀՁ ՓԲԸ	**«ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ»**
ՀՀ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 13, 13/1	**պետական կառավարչական հիմնարկ**
հ/հ 247010000070	ք. Երևան, Մ. Բաղրամյան 19
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	հ/հ 900011545069
ՀՎՀՀ 01538716	ՀՎՀՀ 00061508
հեռ. 54-37-15, ֆաքս. 54-37-16	հեռ. 58-82-38, 094-23-68-67
Գլխավոր տնօրեն՝	Աշխատակազմի ղեկավար
Խ. Զաքարյան	Հ. Յավրյան
Կ.Տ	Կ.Տ

Երկու հազար ինը թվականի .....օգոստոսի ....տասներեքին.....-ին սույն պայմանագիրը վավերացվել է «Միջազգային» նոտարական տարածքի նոտար ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի /անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի /ներկայացուցիչների/ լիազորությունները և իրավունքները ստուգվել են:
ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
Գրանցված է սեղանատետրանում թիվ 5319 ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն «Պետական տուրքի» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

ՆՈՏԱՐ

ՀԱՏԱԿԱԳԾԵՐ

1:200

Լուսանցք

Հատակագիծ

Մ 1:100

Հատակագծի մասշտաբը 1:200

Հատակագիծ Հ.Կարապետյան փող. Ս.Սահակյան

Գլխավոր ճարտարապետ Ս.Պետրոսյան

N 20400021

Հավելված թիվ 2
2009թ. օգոստոսի 27-ին կնքված
տարածքի վարձակալության մասին պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

քաղաք Երևան 15 դեկտեմբերի 2014թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ, որը գործում է իր Կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Արտավազդ Ներսիսյանի (այսուհետ՝ Վարձակալ)՝ մի կողմից, և

«ՎԱՐԴԱՆԱՆՑ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Համբարձում Մինասյանի (այսուհետ՝ Վարձատու), որը «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» համատեղ ձեռնարկություն փակ բաժնետիրական ընկերության և «Բիզնես Կապիտալ» ՍՊԸ իրավահաջորդն է «ՀՀ, քաղաք Երևան, Վարդանանց փակուղի, թիվ 8 շենք, թիվ 3 տարածք» հասցեում գտնվող շինության երրորդ հարկի թիվ 302-308, 313-317 սենյակները (այսուհետ բոլորը միասին՝ Տարածք) վարձակալության տրամադրելու վերաբերյալ 27.08.2009թ. (երկու հազար ինը թվականի օգոստոսի քսանյոթին) կնքված Տարածքի վարձակալության պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր)՝ մյուս կողմից (միասին՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և Պայմանագրի 4.2. կետով, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի թիվ 3 կետի 3.1 ենթակետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Վարձակալը Տարածքի օգտագործման համար որպես վարձավճար Վարձատուին վճարում է ամսական 1 951 000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկային պարտավորությունները: 2015 թվականի հունվարի 01-ից սկսած Վարձակալը Տարածքի օգտագործման համար որպես վարձավճար Վարձատուին վճարում է ամսական 1 839 000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկային պարտավորությունները»:

2. Պայմանագրի «5. Կողմերի պասխանատվությունը» կետում ավելացնել հետևյալ ենթակետերը.

«5.1.1. Սույն պայմանագրի թիվ 2.2. ենթակետով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, Վարձակալի պահանջի դեպքում, Վարձատուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի թիվ 3 կետի 3.1 ենթակետով սահմանված գումարի 0,5%-ի /զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի/ չափով»:

«5.1.2. Տարածքը սպասարկող մեխանիկական, սանիտարատեխնիկական սարքավորումներից Վարձատուի սեփականությունը հանդիսացող սարքավորումների՝ Վարձատուի մեղքով խափանման եւ /կամ/ Վարձատուի մեղքով նման խափանումները ժամանակին չվերացնելու դեպքում, ինչպես նաև՝ Տարածքը սպասարկող մուտքերի և այլ տարածքների մաքրությունը պատշաճ չապահովելու համար, Վարձակալի

պահանջի դեպքում, Վարձատուից գանձվում է տույժ՝ Պայմանագրի թիվ 3 կետի 3.6. ենթակետով սահմանված վճարման ենթակա գումարի 0,05%-ի /զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի/ չափով»:

«5.1.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, Վարձատուի պահանջի դեպքում, Վարձակալից գանձվում է տույժ Պայմանագրի թիվ 3 կետի 3.1 ենթակետով սահմանված գումարի 0,05%-ի /զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի/ չափով»:

« 5.1.4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին: Վնասված կողմը պետք է շտապ զգուշացնի «Անհաղթահարելի ուժի» իրադարձության և արդյունքների մասին և պետք է կիրառի բոլոր խելամիտ ջանքերը՝ նվազեցնելու այնտեղից բխող անբարենպաստ հետևանքները»:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և համարվում է 27.08.2009թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

4. Համաձայնագիրը կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից. յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը

Վարձատու	Վարձակալ
«ՎԱՐԴԱՆԱՆՑ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀՀ քաղաք Երևան, Վարդանանց փողոց փակուղի, 8 շենք, թիվ 3/2 տարածք,	«ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
Հ/հ 2470101262300010,«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	ՀՎ [illegible]/00061508
ՀՎՀՀ 02601694	հ/հ 900011546069
Տնօրեն	Աշխատակազմի ղեկավար
.....Հ. Մինասյան	.....Ա. Ներսիսյան